



ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
PUBLIC ENVIRONMENTAL INFORMATION CENTRE  
ОБЩЕСТВЕННЫЙ ЦЕНТР ЭКОЛОГИЧЕСКОЙ ИНФОРМАЦИИ

Հեռ.՝ (+37410) 551364;

Email: [info@aarhus.am](mailto:info@aarhus.am)

Հասցե՝ Չարենց 46

ՆԵՕԿ\_14/10

29\_07\_2014

ՀՀ ԱԲՆ Հայհիդրոմետ  
ՊՈԱԿ-ի տնօրեն Լ. Վարդանյանին

**Տեղեկատվություն ստանալու հարցում**

**Հարգելի պարոն Վարդանյան**

Վերջին ժամանակներում ՀՀ համայնքների և ՀԿ ներկայացուցիչների մոտ կարծիք կա, որ հաճախակիացել են մթնոլորտային վտանգավոր երևույթները, այդ թվում նաև՝ կարկտահարության դեպքերը. մասնագետները այդ երևույթները կապում են կլիմայի փոփոխության հետ:

Ելնելով նշվածից, միաժամանակ հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացրած Օրհուսի համաձայնագիրը և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթները, կարևորելով հասարակության տեղեկացվածության աստիճանի բարձրացման անհրաժեշտությունը, խնդրում եմ Երևանի Օրհուս կենտրոնին տրամադրել տեղեկատվություն՝ ՀՀ տարածքում կարկտահարության դեպքերի վերաբերյալ, մասնավորապես՝

- Վերջին և նախորդ տասնամյակների կարկտահարության դեպքերի համեմատական տվյալներ
- Վերջին և նախորդ տասնամյակների կարկտահարված տարածքների ընդգրկվածության համեմատական տվյալներ
- Առաջիկա տարիների կարկտահարության դեպքերի կանխատեսումներ (արդյո՞ք միտում կա ավելացման կամ նվազեցման):

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքերի մասին

**Կանխավ շնորհակալություն**

**Երևանի Օրհուս կենտրոնի**

**համակարգող**

**Ս. Այվազյան**